ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 870 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 665-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՀՎՀՀ՝ 05536278) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի սեպտեմբերի 20-ի «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրակա-նացվող «Բնապահպանական պայմանների բարելավում» ծրագրի մասին» N 665-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ոսկե Ագա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01237057) 2024 թվականի նոյեմբերի 20-ին կնքված՝ N ԿԲՀ-ԱԱՊ-ՄԱ-ԱՊՁԲ-24/02 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անկողնային, հիգիենայի և խոհանոցային պարագաների, տնտեսական ապրանքների ու հողաթափերի ձեռքբերում՝ 510,783.36 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02704414) 2024 թվականի նոյեմբերի 20-ին կնքված՝ N ԿԲՀ-ԱԱՊ-ԳՀԱՊՁԲ-24/02 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մեկ դյուրակիր համակարգչի, երեք համակարգչի և մեկ կենցաղային սառնարանի ձեռքբերում՝ 981,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

09.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ